«ՎՅ-ՄԱԱՊՁԲ-2021/8» ծածկագրով
Մեկ անձով գնման ընթացակարգի

# ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ՎՅ-ՄԱԱՊՁԲ-2021/8

ք. Վանաձոր «09» հուլիսի 2021 թ.

<<Վանաձորի թիվ 3 պոլիկլինիկա>> ՊՓԲԸ-ը ի դեմս տնօրեն Ա. Թադևոսյանի, որը գործում է <<Վանաձորի թիվ 3 պոլիկլինիկա>> ՊՓԲԸ -ի կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և ԱՁ Արտակ Մարանդյանը, ի դեմս տնօրեն Ա. Մարանդյանի, որը գործում է ԱՁ Արտակ Մարանդյան-ի կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին։

## 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացույցով նախատեսված տնտեսական ապրանքները (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար։

## 2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի։

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը։

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը։

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով։

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը։

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը։

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի,

2.1.8 Զննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին։

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները։

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

## 3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է 227163 (երկու հարյուր քսանյոթ հազար մեկ հարյուր վաթսուներեք) ՀՀ դրամ: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.3 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

## 4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

## 5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

## 6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0.5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

## 7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը 22 ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը[1]:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նպատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա՝ նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Եթե պայմանագիրն իրականացվում է գործակալության պայմանագիր կնքելու միջոցով.

1) Վաճառողը պատասխանատվություն է կրում գործակալի պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար.

2) պայմանագրի կատարման ընթացքում գործակալի փոփոխման դեպքում Վաճառողը գրավոր տեղեկացնում է Գնորդին՝ տրամադրելով գործակալության պայմանագրի պատճենը և դրա կողմ հանդիսացող անձի տվյալները՝ փոփոխությունը կատարվելու օրվանից հինգ աշխատանքային օրվա ընթացքում

8.7 Եթե պայմանագիրն իրականացվում է համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով, ապա այդ պայմանագրի մասնակիցները կրում են համատեղ և համապարտ պատասխանատվություն: Ընդ որում, կոնսորցիումի անդամի կոնսորցիումից դուրս գալու դեպքում պայմանագիրը միակողմանիորեն լուծվում է և կոնսորցիումի անդամների նկատմամբ կիրառվում են պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցները

8.8 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողությունները) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

---

[1] *Պետական բյուջեի միջոցների հաշվին պարտավորություններ չառաջացնող գնումների դեպքում սույն նախադասությունը պայմանագրից հանվում է:*

8.12 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Պայմանագիրը կազմված է 29 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.15 Պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում, Վաճառողը համաձայնագիրը կնքում և Գնորդին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Գնորդի կողմից միակողմանիորեն լուծվում է:[2]

10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

| ԳՆՈՐԴ | ՎԱՃԱՌՈՂ |
|---|---|
| <<Վանաձորի թիվ 3 պոլիկլինիկա>> ՊՓԲԸ | ԱՁ Արտակ Մարանդյան, |
| ՀՀ, ք. Վանաձոր, Պ. Սևակի 49 | Ք. Վանաձոր, Դեմիրճյան 8, |
| «ԱԿԲԱ-Կրեդիտ Ագրիկոլ բանկ» ՓԲԸ | ՀՀ 2050232156891001 |
| ՀՀ 220055140267000 | ՀՎՀՀ 66914078 |
| ՀՎՀՀ 06907229 | |
| ------------------------- Ա. Թադևոսյան | ------------------------- Ա. Մարանդյան |
| /ստորագրություն/ | /ստորագրություն/ |
| Կ.Տ | Կ.Տ |

Անհրաժեշտության դեպքում պայմանագրում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:

---

[2] *Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի կնքվում "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա:*

Հավելված N 1
« » 2021 թ. կնքված
«ՎՅ-ՄԱԱՊՁԲ-2021 8» ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| նախատեսված չափաբաժնի համարը հրավերով | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը` ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը և ապրանքային նշանը | արտադրողը և ծագման երկիրը | տեխնիկական բնութագիրը | չափի միավորը | միավոր գինը /ՀՀ դրամ | ընդհանուր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր քանակը | մատակարարման հասցեն | ենթակա մատակարարման քանակը | մատակարարման ժամկետները |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 3 | 31521300 | Լուսավորման լամպ 220x100 | | Լուսավորման լամպ 220x100 | հատ | 100 | 5000 | 50 | Վանաձոր, Պ. Սևակի 49 | 50 | Մատակարարումն իրականացվում է պատվիրատուի պահանջից հետո 5աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ շուտ, քան պայմանագիր կնքելու 20-րդ օրից |
| 7 | 44161250 | Լվացարանի հետադարձ խողովակ/ջրի հեռացման խողովակ/ | | Լվացարանի հետադարձ խողովակ/ջրի հեռացման խողովակ/ | մ | 600 | 6000 | 10 | Վանաձոր, Պ. Սևակի 49 | 10 | Մատակարարումն իրականացվում է պատվիրատուի պահանջից հետո 5աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ շուտ, քան պայմանագիր կնքելու 20-րդ օրից |
| 8 | 44161270 | Խմելու ջրի խողովակներ պլաստմասե | | Խմելու ջրի խողովակներ պլաստմասե | մ | 400 | 6000 | 15 | Վանաձոր, Պ. Սևակի 49 | 15 | Մատակարարումն իրականացվում է պատվիրատուի պահանջից հետո 5աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ շուտ, քան պայմանագիր կնքելու 20-րդ օրից |
| 9 | 31531300 | Լամպ էկոնոմ | | Լամպ էկոնոմ | հատ | 1000 | 20000 | 20 | Վանաձոր, Պ. Սևակի 49 | 20 | Մատակարարումն իրականացվում է պատվիրատուի պահանջից հետո 5աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ շուտ, քան պայմանագիր կնքելու 20-րդ օրից |
| 10 | 31331270 | Լար պղնձե 2*1.50 | | Լար պղնձե 2*1.50 | մ | 150 | 15000 | 100 | Վանաձոր, Պ. Սևակի 49 | 100 | Մատակարարումն իրականացվում է պատվիրատուի պահանջից հետո 5աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ շուտ, քան պայմանագիր կնքելու 20-րդ օրից |
| 11 | 31331280 | Լար պղնձե 2*2.50 | | Լար պղնձե 2*2.50 | մ | 250 | 25000 | 100 | Վանաձոր, Պ. Սևակի 49 | 100 | Մատակարարումն իրականացվում է պատվիրատուի պահանջից հետո 5աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ շուտ, քան պայմանագիր կնքելու 20-րդ օրից |
| 12 | 44192200 | Գամ 50մմ-200մմ | | Գամ 50մմ-200մմ | կգ | 750 | 750 | 1 | Վանաձոր, Պ. Սևակի 49 | 1 | Մատակարարումն իրականացվում է պատվիրատուի պահանջից հետո 5աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ շուտ, քան պայմանագիր կնքելու 20-րդ օրից |
| 13 | 44192200 | Գամ 20մմ-30մմ | | Գամ 20մմ-30մմ | կգ | 1200 | 1200 | 1 | Վանաձոր, Պ. Սևակի 49 | 1 | Մատակարարումն իրականացվում է պատվիրատուի պահանջից հետո 5աշխատանքային օրվա ընթացքում, |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | | | | բայց ոչ շուտ, քան պայմանագիր կնքելու 20-րդ օրից |
| 14 | 44531130 | Պտուտակներ 4սմ-5սմ | | Պտուտակներ 4սմ-5սմ | հատ | 10 | 2000 | 200 | Վանաձոր, Պ. Սևակի 49 | 200 | Մատակարարումն իրականացվում է պատվիրատուի պահանջից հետո 5աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ շուտ, քան պայմանագիր կնքելու 20-րդ օրից |
| 15 | 44521120 | Դռան փական | | Դռան փական | հատ | 2800 | 14000 | 5 | Վանաձոր, Պ. Սևակի 49 | 5 | Մատակարարումն իրականացվում է պատվիրատուի պահանջից հետո 5աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ շուտ, քան պայմանագիր կնքելու 20-րդ օրից |
| 16 | 44521121 | Դռան փականի միջուկ | | Դռան փականի միջուկ | հատ | 1700 | 17000 | 10 | Վանաձոր, Պ. Սևակի 49 | 10 | Մատակարարումն իրականացվում է պատվիրատուի պահանջից հետո 5աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ շուտ, քան պայմանագիր կնքելու 20-րդ օրից |
| 17 | 44163171 | Ջրի ռետինե խողովակ Փ-15մմ | | Ջրի ռետինե խողովակ Փ-15մմ | մետր | 350 | 7000 | 20 | Վանաձոր, Պ. Սևակի 49 | 20 | Մատակարարումն իրականացվում է պատվիրատուի պահանջից հետո 5աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ շուտ, քան պայմանագիր կնքելու 20-րդ օրից |
| 18 | 44111412 | Սպիտակ ներկ | | Սպիտակ ներկ | կգ | 1520 | 30400 | 20 | Վանաձոր, Պ. Սևակի 49 | 20 | Մատակարարումն իրականացվում է պատվիրատուի պահանջից հետո 5աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ շուտ, քան պայմանագիր կնքելու 20-րդ օրից |
| 19 | 31411100 | Մարտկոցներ | | Մարտկոցներ | հատ | 100 | 3000 | 30 | Վանաձոր, Պ. Սևակի 49 | 30 | Մատակարարումն իրականացվում է պատվիրատուի պահանջից հետո 5աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ շուտ, քան պայմանագիր կնքելու 20-րդ օրից |
| 20 | 44411110 | Ջրի ծորակ 1 տեղանոց | | Ջրի ծորակ 1 տեղանոց | հատ | 3500 | 10500 | 3 | Վանաձոր, Պ. Սևակի 49 | 3 | Մատակարարումն իրականացվում է պատվիրատուի պահանջից հետո 5աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ շուտ, քան պայմանագիր կնքելու 20-րդ օրից |
| 21 | 39221460 | Վրձին ներկարարական | | Վրձին ներկարարական | հատ | 600 | 1200 | 2 | Վանաձոր, Պ. Սևակի 49 | 2 | Մատակարարումն իրականացվում է պատվիրատուի պահանջից հետո 5աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ շուտ, քան պայմանագիր կնքելու 20-րդ օրից |
| 22 | 31651400 | Մեկուսիչ ժապավեն | | Մեկուսիչ ժապավեն | հատ | 200 | 800 | 4 | Վանաձոր, Պ. Սևակի 49 | 4 | Մատակարարումն իրականացվում է պատվիրատուի պահանջից հետո 5աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ շուտ, քան պայմանագիր կնքելու 20-րդ օրից |
| 23 | 44221161 | Դռան ծխնիներ | | Դռան ծխնիներ | հատ | 200 | 2400 | 12 | Վանաձոր, Պ. Սևակի 49 | 12 | Մատակարարումն իրականացվում է պատվիրատուի պահանջից հետո 5աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ շուտ, քան պայմանագիր կնքելու 20-րդ օրից |
| 24 | 44111414 | Ներկ Լատեքս | | Ներկ Լատեքս | կգ | 480 | 24000 | 50 | Վանաձոր, Պ. Սևակի 49 | 50 | Մատակարարումն իրականացվում է պատվիրատուի պահանջից հետո 5աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ շուտ, քան պայմանագիր |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | | | | | կնքելու 20-րդ օրից |
| 25 | 42131100 | Ջրի փական Փ-15մմ | | Ջրի փական Փ-15մմ | հատ | 2000 | 8000 | 4 | Վանաձոր, Պ. Սևակի 49 | 4 | Մատակարարումն իրականացվում է պատվիրատուի պահանջից հետո 5աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ շուտ, քան պայմանագիրը կնքելու 20-րդ օրից |
| 26 | 24911200 | Էմուլսիա | | Էմուլսիա | կգ | 1625 | 4063 | 2.5 | Վանաձոր, Պ. Սևակի 49 | 2.5 | Մատակարարումն իրականացվում է պատվիրատուի պահանջից հետո 5աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ շուտ, քան պայմանագիրը կնքելու 20-րդ օրից |
| 27 | 31683400 | Եռաբաշխիչ | | Եռաբաշխիչ | հատ | 500 | 2500 | 5 | Վանաձոր, Պ. Սևակի 49 | 5 | Մատակարարումն իրականացվում է պատվիրատուի պահանջից հետո 5աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ շուտ, քան պայմանագիրը կնքելու 20-րդ օրից |
| 28 | 44111421 | Լատեքս ներկի գույներ | | Լատեքս ներկի գույներ | կգ | 3750 | 1350 | 0,36 | Վանաձոր, Պ. Սևակի 49 | 0,36 | Մատակարարումն իրականացվում է պատվիրատուի պահանջից հետո 5աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ շուտ, քան պայմանագիրը կնքելու 20-րդ օրից |
| 30 | 31211140 | Ապահովիչներ | | Ապահովիչներ | հատ | 1400 | 14000 | 10 | Վանաձոր, Պ. Սևակի 49 | 10 | Մատակարարումն իրականացվում է պատվիրատուի պահանջից հետո 5աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ շուտ, քան պայմանագիրը կնքելու 20-րդ օրից |
| 31 | 44111200 | Ցեմենտ | | Ցեմենտ | կգ | 60 | 6000 | 100 | Վանաձոր, Պ. Սևակի 49 | 100 | Մատակարարումն իրականացվում է պատվիրատուի պահանջից հետո 5աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ շուտ, քան պայմանագիրը կնքելու 20-րդ օրից |

| Չ/Հ | Անվանումը ապրանքային նշանի | Միավորի գինը | Մատակարարման ենթակա քանակները ըստ ամիսների | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | փետրվար | | մարտ | | ապրիլ | | մայիս | | հունիս | | հուլիս | | օգոստոս | | սեպտեմբեր | | հոկտեմբեր | | նոյեմբեր | | դեկտեմբեր | | Ընդամենը | |
| | | | քանակ | գումար | քանակ | գումար | քանակ | գումար | քանակ | գումար | քանակ | գումար | քանակ | գումար | քանակ | գումար | քանակ | գումար | քանակ | գումար | քանակ | գումար | քանակ | գումար | քանակ | գումար |
| 3 | Լուսավորման լամպ - 220x100 | 100 | | | | | | | | | | | 25 | 2500 | | | | | | | 25 | 2500 | | | 50 | 5000 |
| 7 | Լվացարանի հետադարձ խողովակ/ջրի հեռացման խողովակ/ | 600 | | | | | | | | | | | 10 | 6000 | | | | | | | | | | | 10 | 6000 |

| | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 8 | Խմելու ջրի խողովակներ պլաստմասե | 400 | | | | | | | | | | | 15 | 6000 | | | | | | | | | | | 15 | 6000 |
| 9 | Լամպ էկոնոմ | 1000 | | | | | | | | | | | 10 | 10000 | | | | | | | 10 | 10000 | | | 20 | 20000 |
| 10 | Լար պղնձե 2*1.50 | 150 | | | | | | | | | | | 50 | 7500 | | | | | | | 50 | 7500 | | | 100 | 15000 |
| 11 | Լար պղնձե 2*2.50 | 250 | | | | | | | | | | | 50 | 12500 | | | | | | | 50 | 12500 | | | 100 | 25000 |
| 12 | Գամ 50մմ-200մմ | 750 | | | | | | | | | | | 1 | 750 | | | | | | | | | | | 1 | 750 |
| 13 | Գամ 20մմ-30մմ | 1200 | | | | | | | | | | | 1 | 1200 | | | | | | | | | | | 1 | 1200 |
| 14 | Պտուտակներ 4սմ-5սմ | 10 | | | | | | | | | | | 100 | 1000 | | | | | | | 100 | 1000 | | | 200 | 2000 |
| 15 | Դռան փական | 2800 | | | | | | | | | | | 3 | 8400 | | | | | | | 2 | 5600 | | | 5 | 14000 |
| 16 | Դռան փականի միջուկ | 1700 | | | | | | | | | | | 5 | 8500 | | | | | | | 5 | 8500 | | | 10 | 17000 |
| 17 | Ջրի ռետինե խողովակ Փ-15մմ | 350 | | | | | | | | | | | 10 | 3500 | | | | | | | 10 | 3500 | | | 20 | 7000 |
| 18 | Սպիտակ ներկ | 1520 | | | | | | | | | | | 10 | 15200 | | | | | | | 10 | 15200 | | | 20 | 30400 |
| 19 | Մարտկոցներ | 100 | | | | | | | | | | | 15 | 1500 | | | | | | | 15 | 1500 | | | 30 | 3000 |
| 20 | Ջրի ծորակ 1 տեղանոց | 3500 | | | | | | | | | | | 2 | 7000 | | | | | | | 1 | 3500 | | | 3 | 10500 |
| 21 | Վրձին ներկարարական | 600 | | | | | | | | | | | 2 | 1200 | | | | | | | | | | | 2 | 1200 |
| 22 | Մեկուսիչ ժապավեն | 200 | | | | | | | | | | | 2 | 400 | | | | | | | 2 | 400 | | | 4 | 800 |
| 23 | Դռան ծխնիներ | 200 | | | | | | | | | | | 6 | 1200 | | | | | | | 6 | 1200 | | | 12 | 2400 |
| 24 | Ներկ Լատեքս | 480 | | | | | | | | | | | 25 | 12000 | | | | | | | 25 | 12000 | | | 50 | 24000 |
| 25 | Ջրի փական Փ-15մմ | 2000 | | | | | | | | | | | 2 | 4000 | | | | | | | 2 | 4000 | | | 4 | 8000 |
| 26 | Էմուլսիա | 1625 | | | | | | | | | | | 1.5 | 2438 | | | | | | | 1 | 1625 | | | 2.5 | 4063 |
| 27 | Եռաբաշխիչ | 500 | | | | | | | | | | | 3 | 1500 | | | | | | | 2 | 1000 | | | 5 | 2500 |
| 28 | Լատեքս ներկի գույներ | 3750 | | | | | | | | | | | 0.36 | 1350 | | | | | | | | | | | 0.36 | 1350 |
| 30 | Ապահովիչներ | 1400 | | | | | | | | | | | 5 | 7000 | | | | | | | 5 | 7000 | | | 10 | 14000 |
| 31 | Ցեմենտ | 60 | | | | | | | | | | | 50 | 3000 | | | | | | | 50 | 3000 | | | 100 | 6000 |

Եթե պայմանագրի գործողության ընթացքում Պատվիրատուի կողմից գնման առարկայի պահանջը ներկայացվել է ոչ ամբողջ խմբաքանակի համար, ապա գնման առարկայի չմատակարարված, մնացորդային խմբաքանակի մասով պայմանագիրը լուծվում է:

Միասնական և բիմիական նյութերի նշված քանակները պահանջվող առավելագույն քանակներն են

- Ապրանքի մատակարարումը մինչև պահեստ և բեռնաթափումն իրականացնում է Մատակարարը
- Մատակարարումը պետք է իրականացվի ժամանակին, պատշաճ
- Ապրանքները պետք է լինեն չօգտագործված

| ԳՆՈՐԴ | ՎԱՃԱՌՈՂ |
|---|---|
| <<Վանաձորի թիվ 3 պոլիկլինիկա>> ՊՓԲԸ<br>ՀՀ, ք. Վանաձոր, Պ. Սևակի 49<br>«ԱԿԲԱ-Կրեդիտ Ագրիկոլ բանկ» ՓԲԸ<br>ՀՀ 220055140267000<br>ՀՎՀՀ 06907229<br><br>---------- Ա. Թադևոսյան<br>/ստորագրություն/<br>Կ.Տ | ԱՁ Արտակ Մարանդյան,<br>Ք. Վանաձոր, Դեմիրճյան 8,<br>ՀՀ 205023215689100[1]<br>ՀՎՀՀ 66914078<br><br>---------- Ա. Մարանդյան<br>/ստորագրություն/<br>Կ.Տ |

Հավելված N 2
« » 2021 թ. կնքված
ՎՅ ՄԱԱՊՁԲ-2021/8 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

22 դրամ

| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանում | վճարումները նախատեսվում է իրականացնել 2021 թ<<Վանաձորի թիվ 3 պոլիկլինիկա>> ՊՓԲԸ բյուջետային միջոցների հաշվին՝ ըստ ամիսների այդ թվում | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 3 | 31521300 | Լուսավորման լամպ 220x100 | | | | | | 2500 | 2500 | 2500 | 2500 | 5000 | 5000 | 5000 |
| 7 | 44161250 | Լվացարանի հեռադարձ խողովակ/ջրի հեռացման խողովակ/ | | | | | | 6000 | 6000 | 6000 | 6000 | 6000 | 6000 | 6000 |
| 8 | 44161270 | Խմելու ջրի խողովակներ պլաստե | | | | | | 6000 | 6000 | 6000 | 6000 | 6000 | 6000 | 6000 |
| 9 | 31531300 | Լամպ էկոնոմ | | | | | | 10000 | 10000 | 10000 | 10000 | 20000 | 20000 | 20000 |
| 10 | 31331270 | Լար պղնձե 2*1.50 | | | | | | 7500 | 7500 | 7500 | 7500 | 15000 | 15000 | 15000 |
| 11 | 31331280 | Լար պղնձե 2*2.50 | | | | | | 12500 | 12500 | 12500 | 12500 | 25000 | 25000 | 25000 |
| 12 | 44192200 | Գամ 50մմ-200մմ | | | | | | 750 | 750 | 750 | 750 | 750 | 750 | 750 |
| 13 | 44192200 | Գամ 20մմ-30մմ | | | | | | 1200 | 1200 | 1200 | 1200 | 1200 | 1200 | 1200 |
| 14 | 44531130 | Պտուտակներ 4մմ-5մմ | | | | | | 1000 | 1000 | 1000 | 1000 | 2000 | 2000 | 2000 |
| 15 | 44521120 | Դռան փական | | | | | | 8400 | 8400 | 8400 | 8400 | 14000 | 14000 | 14000 |
| 16 | 44521121 | Դռան փականի միջուկ | | | | | | 8500 | 8500 | 8500 | 8500 | 17000 | 17000 | 17000 |

| | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 17 | 44163171 | Ջրի ռետինե խողովակ Փ-15մմ | | | | | | 3500 | 3500 | 3500 | 3500 | 7000 | 7000 | 7000 |
| 18 | 44111412 | Սպիտակ ներկ | | | | | | 15200 | 15200 | 15200 | 15200 | 30400 | 30400 | 30400 |
| 19 | 314,11100 | Մարտկոցներ | | | | | | 1500 | 1500 | 1500 | 1500 | 3000 | 3000 | 3000 |
| 20 | 44411110 | Ջրի ծորակ 1 տեղանոց | | | | | | 7000 | 7000 | 7000 | 7000 | 10500 | 10500 | 10500 |
| 21 | 39221460 | Վրձին ներկարարական | | | | | | 1200 | 1200 | 1200 | 1200 | 1200 | 1200 | 1200 |
| 22 | 31651400 | Մեկուսիչ ժապավեն | | | | | | 400 | 400 | 400 | 400 | 800 | 800 | 800 |
| 23 | 44221161 | Դռան ծխնիներ | | | | | | 1200 | 1200 | 1200 | 1200 | 2400 | 2400 | 2400 |
| 24 | 44111414 | Ներկ Լատեքս | | | | | | 12000 | 12000 | 12000 | 12000 | 24000 | 24000 | 24000 |
| 25 | 42131100 | Ջրի փական Փ-15մմ | | | | | | 4000 | 4000 | 4000 | 4000 | 8000 | 8000 | 8000 |
| 26 | 24911200 | Էմուլսիա | | | | | | 2438 | 2438 | 2438 | 2438 | 4063 | 4063 | 4063 |
| 27 | 31683400 | Եռաբաշխիչ | | | | | | 1500 | 1500 | 1500 | 1500 | 2500 | 2500 | 2500 |
| 28 | 44111421 | Լատեքս ներկի գույներ | | | | | | 1350 | 1350 | 1350 | 1350 | 1350 | 1350 | 1350 |
| 30 | 31211140 | Ապահովիչներ | | | | | | 7000 | 7000 | 7000 | 7000 | 14000 | 14000 | 14000 |
| 31 | 44111200 | Ցեմենտ | | | | | | 3000 | 3000 | 3000 | 3000 | 6000 | 6000 | 6000 |

ԳՆՈՐԴ

<<Վանաձորի թիվ 3 պոլիկլինիկա>> ՊՓԲԸ
ՀՀ, ք. Վանաձոր, Պ. Սևակի 49
«ԱԿԲԱ-Կրեդիտ Ագրիկոլ բանկ» ՓԲԸ
ՀՀ 220055140267000
ՀՎՀՀ 06907229

---------------------- Ա. Թադևոսյան
/ստորագրություն/

Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ

ԱՁ Արտակ Մարանդյան.
Ք. Վանաձոր, Դեմիրճյան 8,
ՀՀ 2050232156891001
ՀՎՀՀ 66914078

---------------------- Ա. Մարանդյան
/ստորագրություն/

Կ.Տ